ՀՏԴ 338.48(479.243) *Զբոսաշրջություն*

Սերգեյ Սարգսյան, ԱրՊՀ դասախոս,
ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և
զբոսաշրջության նախարարության աշխատակազմի
զբոսաշրջային ենթակառուցվածքների,
ծրագրերի և վերահսկողության բաժնի պետ ,
Էլ.հասցե՝ Sergej23sargsjan@rambler.ru

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ և ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Պետական քաղաքականության հիմնական ջանքերը ուղղված են՝ նոր, մրցունակ զբոսաշրջային երթուղիների ձևավորմանը, դրանցում ապահովելով նաև տեղական բնակչության ակտիվ մասնակցությունը, Արցախի Հանրապետությունում առաջնային զարգացման ենթակա բնական, սոցիալ-մշակութային և առողջարանային ռեսուրսներով հարուստ զբոսաշրջային տարածաշրջանների զարգացմանը, ինչը խթան կհանդիսանա ներքին և ներգնա զբոսաշրջության զարգացմանը:

Զբոսաշրջության ոլորտի օրենսդրական դաշտի կարգավորումը, հյուրանոցային տնտեսության օբյեկտների հաշվառումը և որակավորումը, զբոսավարների լիցենզավորումը համընդհանուր միջազգային ընդունված չափանիշներին համապատասխան, կխթանի սպասարկման որակի բարձրացմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, մեր երկիր ժամանող միջազգային զբոսաշրջային այցելուների թվի աճին՝ կնպաստի Արցախի Հանրապետության զբոսաշրջության զարգացմանը:

Բանալի բառեր՝ *Արցախի Հանրապետություն, Օրենք, հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, ծառայությունների որակ, զբոսաշրջիկ, ԱՀ կառավարության որոշում, ներքին զբոսաշրջություն, ներգնա զբոսաշրջություն, զբոսաշրջության զարգացում, զբոսաշրջային երթուղիներ, ենթակառուցվածքներ:*

Сергей Саргсян

ФОРМИРОВАНИЕ И РЕГУЛИРОВАНИЕ ПРАВОВОГО ПОЛЯ СФЕРЫ ТУРИЗМА В РЕСПУБЛИКЕ АРЦАХ

Усилия государственной политики в основном направлены на создание новых туристических маршрутов, обеспечение активного участия в них местного населения, на первоочередное развитие регионов Арцахской Республики, которые богаты природными, социально- культурными и оздоровительными ресурсами, что в свою очередь станет стимулом для развития въездного и внутреннего туризма.

Регулирование законодательной базы в сфере туризма, регистрация и классификация объетов гостиничного хозяйства, лицензирование гидов улучшит качество обслуживания, послужит стимулом для развития инфраструктур и увеличения колличества пребывающих в нашу страну туристов, что положительно повлияет на развитие туризма в Арцахской Республике.

Ключевые слова: *Арцахская Республика, Закон, объекты гостиничного хозяйства, качество обслуживания, турист, решение правительства Арцахской Республики, внутренний туризм, въездной туризм, развитие туризма, туристические маршруты, инфраструктура.*

Sergey Sargsyan

THE FORMATION AND REGULATION OF THE LEGISLATIVE FIELD OF TOURISM SPHERE IN THE REPUBLIC OF ARTSAKH

The main efforts of the state policy are aimed at the formation of new, competitive tourism routes providing the active involvement of the local population in them and the primary development of the

regions of the Republic of Artsakh which are rich in natural, socio-cultural and resort-oriented resources, which in turn will stimulate the development of the inland and inbound tourism.

Regulation of the legislative base in the sphere of tourism, registration and qualification of hotel facilities, licening of guides according to the international standards will improve the quality of services, will stimulate the development of infrastructures and increase the number of international tourists visiting our country which will contribute to the development of tourism in the Republic of Artsakh.

Key words: *The Republic of Artsakh, Law, objects of hotel industry, quality of services, tourist, government decision of the Republic of Artsakh, inland tourism, inbound tourism, tourism development, tourism routes, infrastructures.*

Վերջին տարիներին զբոսաշրջության ոլորտում իրականացված միջոցառումները հիմնականում ուղղված են եղել բնագավառի օրենսդրական դաշտի ձևավորմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում Արցախի Հանրապետության զբոսաշրջային ներուժի ներկայացմանը: Զբոսաշրջության ոլորտի կայացման և զարգացման նպատակով՝ ոլորտում կազմակերպչական և տնտեսական գործունեության համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը, զբոսաշրջային ոլորտի տեղեկատվագովազդային ապահովման համակարգի ստեղծմանը և զարգացմանը, ԱՀ զբոսաշրջության ոլորտի միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանը և համագործակցության կապերի ընդլայնմանը, զբոսաշրջային երթուղիների սահմանմանը և դրանց ընդգրկմանը, ԱՀ տարաբնակեցման և տարածքային զարգացման ծրագրերում, զբոսաշրջության բնագավառում արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացմանը, միջազգային զբոսաշրջային շուկայում հայրենական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացմանը, հայրենական զբոսաշրջային արդյունքի կայուն որակի և մրցունակության ապահովմանն ուղղված միջոցառումներ են իրականացվել:

Զբոսաշրջության ոլորտի օրենսդրական դաշտի ձևավորման և կատարելագործման նպատակով Արցախի Հանրապետությունում ընդունվել են մի շարք օրենքներ և փոփոխություններ կատարվել գործող օրենքներում: Դրանցից է Արցախի Հանրապետության «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ԱՀ օրենքը, որն ընդունվել է 2004թվականի նոյեմբերի 24-ին: [1]

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործնեության մասին» ԱՀ օրենքի ընդունումից հետո, Արցախի Հանրապետության կառավարության կողմից հաստատվել են մի շարք որոշումներ՝ ուղղված զբոսաշրջության ոլորտի ձևավորմանը:

Արցախի Հանրապետության կառավարությունը 2005թ. հունիսի 28-ին որոշում է ընդունել զբոսավարի և ուղեկցորդի գործունեության լիցենզավորման կարգի մասին, որով կարգավորվում են զբոսավարի և ուղեկցորդի մասնագիտական որակավորման ստուգման ու լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:[2] Այդ կարգը չի տարածվում այն անձանց գործունեության վրա, որոնք զբոսավարի և ուղեկցորդի գործունեությունն իրականացնում են, բացառապես այն զբոսաշրջային օբյեկտի սահմանում, որի աշխատողն են հանդիսանում: ԱՀ-ում զբոսավարի և ուղեկցորդի մասնագիտական որակավորման ստուգումն ու գործունեության լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» ԱՀ օրենգով: Զբոսավարի և ուղեկցորդի մասնագիտական որակավորման ստուգումն ու լիցենզավորումն իրականցնում է ԱՀ կառավարության կողմից հաստատված զբոսաշրջության ոլորտի լիազոր մարմինը: Լիցենզիան անժամկետ տրվող փաստաթուղթ է և գործում է ԱՀ ամբողջ տարածքում:

Համաձայն «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ԱՀ օրենքի դրույթների՝ Արցախի Հանրապետության կառավարությունը 2005թ. հուլիսի 26-ին ընդունել է՝ «Հյուրանոցային ծառայություններ մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերը և որակավորման

[1] «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին»
Արցախի Հանրապետության ՀՕ-36 օրենք, ընդունված 2004 թվականի
նոյեմբերի 24-ին

[2] «ԱՀ կառավարության որոշում, 2005թ. հունիսի 28-ին, N288»

ընթացակարգը հաստատելու մասին» թիվ 319 որոշումը, որի համաձայն հյուրանոցային ծառայությունների մատուցման որակը պետք է համապատասխանի նորմատիվ իրավական ակտերին և միջազգային չափանիշներին:[1] Հյուրանոցային տնտեսության օբյեկտները կամավոր սկզբունքով կարող են ստանալ որակավորման կարգ, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգ շնորհվում է սույն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Որակավորման կարգ ունեցող հյուրանոցային տնտեսության օբյեկտների նյութատեխնիկական ապահովումը և մատուցվող ծառայությունների ցանկը պետք է համապատասխանի շնորհված որակավորման կարգի պահանջներին: Արդյունքում 2006 թ. կատարվել են հետևյալ աշխատանքները. զբոսաշրջության ոլորտի իրավական դաշտի կատարելագործման համար փոփոխություններ են կատարվել ԱՀ կառավարության 2005թ. հունիսի 28-ի որոշման մեջ և նույն թվականի նոյմբերի 3-ի «Զբոսավարի և ուղեկցորդի լիցենզավորման հանձնաժողովի կանոնադրությունը, զբոսավարի և ուղեկցորդի որակավորման վկայականների ձևերը հաստատելու, որակավորման և լիցենզավորման հանձնաժողով ստեղծելու մասին» հրամանում:

Առաջին անգամ 2006թ. մարտի 6-ին ԱՀ Կառավարությունն ընդունել է որոշում՝ «ԱՀ զբոսաշրջության զարգացման 2006թ. պետական ծրագիրը» հաստատելու մասին: Ծրագրով նախատեսված էր պետբյուջեից հատկացնել մեկ միլիոն դրամ: [2]

«ԱՀ զբոսաշրջության զարգացման պետական ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը» 2006 թվականից կրում է ամենամյա բնույթ: 2018 թվականի ծրագրով նախատեսված է պետբյուջեից հատկացնել քսանհինգ միլիոն դրամ:

Արցախի Հանրապետության կառավարության կողմից 2008թ. օգոստոսի 13-ին N566 որոշում է ընդունվել «Արցախի Հանրապետության կառավարությանն առընթեր Զբոսաշրջության վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ԱՀ կառավարությանն առընթեր Զբոսաշրջության վարչության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին:[3]

2009 թվականի հունիսի 24-ին «Պետական տուրքի մասին» ԱՀ ՀՕ-104 օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ ԱՀ մուտքի զբոսաշրջային արտոնագիր ստանալու համար գանձվում է 3000 դրամ, նախկին 11000 դրամի փոխարեն:[4]

2010 թվականի ապրիլի 15-ին «Ավելացված արժեքի մասին» ԱՀ ՀՕ-43 օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ ԱՀ-ում արտադրված ձեռագործ գորգերի իրացումը ազատված է ավելացված արժեքի հարկից, ինչը մեծ խթան հանդիսացավ Արցախում գորգագործության վերականգմանը:[5]

2009 թվականի հունիսի 23-ին ԱՀ Շահումյանի շրջանի Զուար համայնքի տարածքում գտնվող «Տաք Զուր» բնական հուշարձանը և նրա շրջակայքը՝ 350մ շառավղով, Արցախի Հանրապետության կառավարության թիվ 408-Ն որոշման համաձայն ճանաչվել է որպես զբոսաշրջային տարածաշրջան:[6]

2011թ. հուլիսի 6-ի ՀՕ-36 «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Արցախի Հանրապետության օրենքում հոդվածային փոփոխություն և լրացում կատարելուց հետո, 10-րդ հոդվածի համաձայն, ԱՀ տարածքում գործող հյուրանոցային տնտեսության օբյեկտները մինչև 2011թ. հոկտեմբերի 28-ը պետք է պարտադիր հաշվառվեին:[7] Տվյալ ժամանակահատվածում լիազոր մարմնի կողմից հաշվառվեց ԱՀ տարածքում գործող 31 հյուրանոցային տնտեսության օբյեկտ: Նույն թվականի սեպտեմբերի 6-ին ըստ ներկայացված հայտի որակավորվել է «Պարկ Հոթել Արցախ» հյուրանոցը, որին որակավորման հանձնաժողովի եզրակացության հիման վրա ԱՀ կառավարության առընթեր զբոսաշրջության վարչության պետի որոշմամբ շնորհվել է

[1] «ԱՀ կառավարության որոշում, 2005թ. հուլիսի 26-ին, N319»
[2] «ԱՀ կառավարության որոշում, 2006թ. Մարտի 06-ին N72»
[3] «ԱՀ կառավարության որոշում, 2008թ. օգոստոսի 13-ին N566»
[4] «Պետական տուրքի մասին» ԱՀ ՀՕ-104 օրենք
[5] «Ավելացված արժեքի մասին» ԱՀ ՀՕ-43 օրենք
[6] «ԱՀ կառավարության որոշում, 06 հուլիսի 2009թ. N 408-Ն»
[7] «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Արցախի Հանրապետության ՀՕ-36 օրենք

որակավորման կարգի «երեք աստղ» և որակավորման վկայական: 2012թ. ապրիլի 3-ի որոշմամբ, ներկայացված հայտի համաձայն որակավորվել է «Ավան Շուշի Պլազա» հյուրանոցը, որին որակավորման հանձնաժողովի եզրակացության հիման վրա ԱՀ կառավարության առընթեր զբոսաշրջության վարչության պետի որոշմամբ շնորհվել է հյուրանոցային որակավորման կարգի «երեք աստղ» և որակավորման վկայական: 2013 թվականին որակավորվել է «Արմենիա» հյուրանոցը, որին շնորհվել է հյուրանոցային որակավորման կարգի «չորս աստղ»:

«Ստեփանակերտի օդանավակայանի վերագործարկման կապակցությամբ զբոսաշրջության ոլորտում իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ԱՀ կառավարության 2011թ. մարտի 22-ի ընդունած որոշման համաձայն, Ստեփանակերտի օդանավակայանի վերագործարկումից հետո ներգնա զբոսաշրջիկների մեծ մասը նախապատվությունը կտա ԱՀ տարածք այցելել օդանավով:[1] Զբոսաշրջիկների առաջին տպավորությունը մեր երկրի մասին կձևավորվի հենց ժամանման պահից՝ օդանավակայանի շենքում: Մեծ նշանակություն ունի տեղեկատվական և սպասարկման ծառայությունների ենթակառուցվածքների առկայությունը, որակն ու մատչելիությունը: Որոշմամբ ամրագրված միջոցառումների կատարումը խթան կհանդիսանա զբոսաշրջության զարգացման գործում, ձևավորելով Արցախի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ երկրի նկարագիր:

2011թ. սեպտեմբերի 14-ին ԱՀ կառավարության կողմից ընդունվել է թիվ 660-Ն որոշումը «ԱՀ Հարավային զբոսաշրջային երթուղու զարգացման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը հաստատելու մասին»:[2] Որոշման համաձայն հարավային զբոսաշրջային երթուղու զարգացման ծրագիրը կիրականացվի մի քանի տարվա ընթացքում՝ պետության և մասնավոր հատվածի համատեղ ջանքերով, որի արդյունքում տվյալ երթուղու ողջ երկայնքով կունենանք վերանորոգված տարածքների կազմակերպված ու պահպանվող պատմամշակութային և բնական հուշարձաններ, ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանող ենթակառուցվածքային զարգացած փոքր ու միջին բիզնես: Հարավային զբոսաշրջային երթուղու վրա գտնվում են Հադրութի, Ասկերանի, Մարտունու շրջանների 20-ից ավելի համայնքներ՝ մոտ 14.000 բնակչությամբ: Տվյալ շրջաններում կսկսեն զարգանալ ավանդական արհեստները, ինչը կնպաստի բնակչության եկամտի ավելացմանը և ավանդական արհեստների պահպանմանը:

Արցախի Հանրապետության կառավարության կողմից 2013 թվականի սեպտեմբերի 23-ին ընդունվել է №646-Ն «Արցախի Հանրապետությունում զբոսաշրջության միջազգային օրը նշելու մասին» որոշումը, որի համաձայն սեպտեմբերի 27-ը Արցախի Հանրապետությունում նշվում է որպես զբոսաշրջության միջազգային օրը:[3] Օրվա կապակցությամբ կազմակերպվում են մի շարք միջոցառումներ:

2015 թվականի մարտի 13-ին «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Արցախի Հանրապետության ՀՕ-5Ն օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ «Զբոսաշրջային գործունեությամբ զբաղվող սուբյեկտները մինչև զբոսաշրջային գործունեություն սկսելը պարտավոր են հաշվառվել զբոսաշրջային գործունեությամբ զբաղվող սուբյեկտների հաշվառման մատյանում՝ լիազոր մարմնի կողմից, Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով»:[4]

2015 թվականից իրականացվում են զբոսաշրջային օպերատորների և զբոսաշրջային գործակալների պարտադիր հաշվառում: Նշված ժամանակահատվածում լիազոր մարմնի կողմից հաշվառվել են ինը տուրօպերատոր և մեկ զբոսաշրջային գործակալ:

2011-2016թթ. ԱՀ կառավարության որոշումներով ստեղծվել են զբոսաշրջային 4 արգելոցներ՝ «Տիգրանակերտի», «Հունոտի կիրճի», «Ազոխի քարանձավի», «Տողի մելիքանիստ-ապարանքի» տարածքներում:[5]

---

[1] «ԱՀ կառավարության որոշում, 22 մարտի 2011թ. N 162-Ա»

[2] «ԱՀ կառավարության որոշում, 14 սեպտեմբերի 2011թ. N 660-Ն»

[3] «ԱՀ կառավարության որոշում, 23 սեպտեմբերի 2013թ. N 646-Ն»

[4] «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Արցախի Հանրապետության ՀՕ-5Ն օրենք

[5] «ԱՀ կառավարության որոշում, 22 մարտի 2011թ. N 161-Ն», «ԱՀ կառավարության որոշում, 23 դեկտեմբերի 2014թ. N 902-Ն»

2008 թվականից Արցախի Հանրապետության կառավարության կողմից ընդունվում են «Զբոսաշրջության միջնաժամկետ ծախսային ծրագրերը» (ՄԺԾԾ):

Ծրագիրն ուղղված է «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ԱՀ օրենքի հիմնական սկզբունքների և նպատակների իրականացմանը, որի հիմնական նպատակն ԱՀ-ում ժամանակակից բարձրարդյունավետ և մրցունակ զբոսաշրջային արդյունքի ստեղծումն ու միջազգային զբոսաշրջային շուկա արտահանումն է: Ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների արդյունքը պետք է ապահովի զբոսաշրջիկների թվաքանակի կայուն աճ, հանրապետություն և համապատասխանաբար պետական բյուջե արտարժույթի ներհոսքի ավելացում, միջազգային զբոսաշրջային շուկաներում ԱՀ ինտեգրման գործընթացի խթանում:

Հիմա գործում է 2017-2019թթ. «Զբոսաշրջության միջնաժամկետ ծախսային ծրագիրը»:[1]

[1] «ԱՀ կառավարության որոշում, 20 սեպտեմբերի 2017թ. N 670-Ն»